ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ԽՐԱԽՈՒՍՎԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ

29.12.2014 13:09

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում շաբաթ օրը՝ դեկտեմբերի 27-ին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնների կապակցությամբ տոնական ընդունելություն էր կազմակերպվել: Միջոցառման ընթացքում մի շարք փաստաբաններ պարգևատրվել են.

ՀՀ փաստաբանների պալատի անդամներ Հայկ Ալումյանը և Մելանյա Առուստամյանը Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտի կայացման գործում ներդրած մեծ ավանդի համար ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշման հիման վրա պարգևատրվել են ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամի վկայականներով և կրծքանշաններով:

ՀՀ փաստաբանների պալատի հետ երկարամյա համագործակցության և Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական ինստիտուտի կայացման գործում ներդրած մեծ ավանդի համար ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի որոշման հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամի վկայագրով և կրծքանշանով է պարգևատրվել նաև Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության փոխտնօրեն Հասմիկ Հակոբյանը:

Ամանորյա ընդունելության ընթացքում պատվոգրեր են ստացել հանրային պաշտպաններ Ռաֆիկ Սաֆարյանը, Սիրանուշ Հարությունյանը և Անժելյա Հոբոսյանը՝ Հանրային պաշտպանի գրասենյակում երկարամյա աշխատանքի և Հայաստանի Հանրապետությունում հանրային պաշտպանության ինստիտուտի կայացման հարցում ներդրած մեծ ավանդի համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 1){ updateCommentsCount(window.location.href); } })